



ՕՐԱԳԻՐ ՏԱՍՆՈՐԵԱՅ

Եւ հրատարակուի Ամսոյն 10ին 20ին եւ վերջին:
Տարեկան գինն է 100 դանեկան ԿԱՆԻՏԻ:
Վեցամսեայ „ 60 „
Ուղարկել կրնայ ստորագրուիլ, Պօլիս Զենցեթի խանը վարի
շարկը Թ. 12 Խմբագրի սենեակը:
Ստորագրութիւնները ամեն ամսու 1էն կսկըտի:

Երկրորդ լրգանին ամբողջ 18 բիւլ ուղարկ 50 դանեկան
պիտի վճարէ:
Անձնական լաճու մը համար ըլլալու ծանուցմանց հա-
մեմատաւար սակարկութիւն կըլլայ:
Ո եւ իցե նամակ եւ գրութիւնք Խմբագրին պիտի ուղ-
ղուի:

31 ՕԳՈՍՏՈՍ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ 1861

ԹԻՒ 36

ՆԱՄԱԿ ՄԻ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Տանկատանի Հայոց գաւառներէն մեկուն մե-
ջէն՝ Գրիստոնեական ճշմարիտ Հաւատոյն յուսո-
վը լուսաւորեալ մեկ քանի Հայ եղբարք, այս օ-
րերս ուրիշ մեկ հաւատարիմ բարեկամի մը ձե-
ռօք համառօտագրեալ Նամակ մի ուղարկած են
մեզի. որուն մէջ խիստ հետաքրքրական Ազգային
նիւթեր ըլլալով՝ անոր պատճենը պատասխանովը
հանդերձ հոս կը դնեմք. ՚ի տեղեկութիւն ողջա-
միտ Հայ հասարակութեան:

ՊԱՏՃԷՆ ՆԱՄԱԿԻՆ

« Ի բազում ժամանակէ հետեւ Կ. Պօլսոյ Հայ
հանձարեղ եղբարց մէջ ծագած՝ ՚ի մեզ անստու-
գելի խռովութեանց խառնամառն ձայնից արձա-
գանքը՝ վերջապէս հասանելով ՚ի լսելեաց մերոց,
մեծ սրտի ցաւոց եւ տագնապից յորձանքներուն
մէջ ընկղմեալ եղեար:

Եւ եւս առաւել սաստիկ ցաւն այժմ այն է ՚ի
մեզ, որ այդ խռովութեանց պատճառն զինչ են,
եւ այնքով սկզբնաւորապէս ինչ բաներէ յղացած
ծնած ու այնքան հսկայացած են, դեռ ցայս ժա-
մբս նոցա վերայ բուն աղբիւրին եւ ստուգաբար
ոչ կարողացանք փոքր ինչ տեղեկութիւն մի ստա-
նալ: Արդարեւ ուղեւոր օտարագիրք ոմանք, որ
երբեմն անցանէն ՚ի միջոյ գաւառիս, զարմանալ-
էօք պատմեն քանի մի բան ՚ի մեզ ասելով քե՛
« Յայսմ վայրի Պօլսոյ Լուսաւորչական Հայերից ո-
մանք, ՚ի յօտար ազգաց կանոնաց քաղեալ Սահ-
մանադրութիւն մի շարագրելով, գնա իբրեւ Ս. Ա.
ւետարան (քան իցի, օ՛ն անգր); եւ կամ իբրեւ
մի ՚ի Ս. Գիրք՝ կամին ջերմեռանդաբար պաշտել,

եւ քե որ ընդունի գայն այսր կերպարանօք, այն-
պիսին իբր համարի լուսաւորեալ, երե ոչ խաւար-
եալ: Ահա վասն այսր պատճառի յիշեալ Հայ ժո-
ղովորդն կարծեօք յերկուց բաժանեալ, մի կողմն
(որ կոչի Սահմանադրական) իւրեանց նախնական
հաւատոյ եւ օրինաց պաշտամունքն մոռացեալ՝
ոչ ճանաչեն զեկեղեցի եւ զպաշտօնեայս նորին.
հանապազ անարգեն գաւառորդիսն նախնի Սըր-
բազան հարց իւրոց. եւ զՊատրիարքն Երուսաղէ-
մի, որ վախճանեալ է ուրն ամիսէ հետեւ, անգի-
շանելի կերպիւ կամին ՚ի տեղի նորա արտաքոյ
Միաբանութենէ՝ զեպիսկոպոս ոմն Պատրիարք
կարգել, ոչինչ համարելով այսր պատճառի ա-
ւանդեալ հին եւ ընդհանրական նզովք մի, որն որ
Սրբազան Հարքն ձեր զոգցես դարս եւ կես առաջ
վճռաբար հաստատել կամեցեր են, վասն խաղա-
ղութեան եւ պայծառութեան վանից Սրբոյն Յա-
կովբայ, որ յերուսաղէմ . . . :

Եւ միւս կողմն (որ ըստ ոմանց կոչի խաւարեալ
եւ ըստ իւրեանց Աւանդապաճ), միակերպ Սահմա-
նադրականաց յայս ընթացից հակառակ կալով,
քանի մի գաղիասէր հոգւոյ շարադրած Սահմա-
նադրութիւնն ընդունելու յօժարութիւն ցըցունել ոչ
կարեն. այլ հաստատ առաջադրութեամբ կամին
Օսմանեան վեհափառ Տերութեան օրինաց համա-
ձայն եւ Հայկական բնաւորութեան յարմար Կա-
նոնադրութիւն մի ունենալ, եւ գայն ոչ իբրեւ Ա.
ւետարան կամ մի ՚ի Ս. Գիրք, այլ Ազգային յա-
ռաջադիմութեան նպաստամատոյց լինելու ուղղա-
շաւիդ առաջնորդ մի ճանցնալ եւ այնպէս յարգել.
ու ամեն ատեն պատրաստ ենք ասեն նորին գոր-
ծադրութեան սիրով փութաշան լինիլ . . . :

Իսկ ՚ի մասին Երուսաղէմի Պատրիարքութեան՝
անդադար կը մըցին Սահմանադրականաց՝ Պատրիար-

քին արտաքուստ լինելու, կամ քանի մի վարդապետաց Պատրիարք չը լինելու դիտաւորութեանց ղեմ, յարգելով այն յիշեալ նշանաւոր նշաններն, որ ինքնապէս ասացինք՝ Ս. Յակովբայ Միաբանութենից դուք երբեք մէկ մի նոյն տեղ Պատրիարք լինել չի կրնալուն թողաք, ձեր Ս. Նախնիքն մեծ ժողովով մի ղեկ հաճեք են, վասն ստիպողական պատճառի, զոր մենք ոչ գիտեմք զստոյցն, դուք կարող էք իմանալ Պօլսոյ մեր այս կողման ազգակիցներին . . . » :

Ահա այսքան բան լուեալ էմք ՚ի կողման օտարազգի ուղեւորաց, որ ղեռ. հաստալի ջեն մեզ, զի համօրէն Հայք այս անդրէն ջափազանց կրօնասէր են աւանդապան լինելով՝ ոչ կարեն յայսմ մասին Սահմանադրական կոչեցեալքն բաժանիլ յԱւանդապան յեղբարց, են հետեւեալ այնպիսի վնասակար ընթացից, որ ուղղակի տանի յանկրօնութեան ճանապարհն: Եւ դարձեալ ոչ կարեն ընդունիլ այն օրինակ օտար դրօքիւնք, ուր ազգն հանդերձ Ս. կրօնիւր կանուխ կամ անագան մատնի ՚ի կորուստ . . . :

Եւ արդ խնդրեմք ՚ի քեն ճկ սիրելի եղբայր, երբ չը լինի նեղութիւն ձերոյ սիրելութեան, յետ ընթերցելոյ նամակն մեր՝ փութանակի ստոյգ տեղեկութիւն մի ժամանեցեք ՚ի մեր կողման, վասն ճշմարտութեան եւ ուղիւնք բանիցս այսորիկ, եւ վասն հանդարտութեան եւ հանգստութեան սրտից մերոց, զի որով իրապէս իմացեալ լինելով Կ. Պօլսոյ Հայ եղբարց արդի վիճակն, երբ տեսանեմք յաջողութիւն, այսինքն խաղաղութիւն, նոյն հետալն ուրախութեան գաղաղակք բարձրենեմք անըրպէսն գաւառիս Հայոց. ընդհակառակն երբ ճախողանք, այսինքն խռովութիւն, Կհ. ՚ի նորանոր լամբ, ողբամք, հեծեմք եւ զինքեանս յուսահատութեան անարկու լիճից մեջ արկանեմք, քանզի միշտ եւ հանապազ խաղաղութեան ճայն հնչուելու կեղծութեան, յետին աստիճան խռովութեան ճայնից արձագանքներն կորուստն ՚ի մեզ, հանդերձ սոսկալի գայրագոյրեամբ:

Ուստի կրկնակի ասելով, յոսով եւ ակնկալու էմք որ՝ մեր այս դուգնաքեայ նամակին պատասխան, ձեռով եւ գոնացուցիչ կերպիւ պիտի կարենամք ընդունիլ ՚ի կողման ձերոյ յեղբայրութեան:

Մնա՛ք եւ այլն:

1864 Օգոստոս 25.

(Այս նամակն) դաւառին մեջ բնակեալ մէկ քանի Լուսաւորչական Հայք:

ՀԱՄԼՈՑ ՊԵՏԵԼՈՒՆ ՄԸ

Եւ Հ. Մ. Ե. Լ. Բ. Ս. Լայն:

Մեծարգոյ սիրելի եղբարք:

Ընդունեցանք ձեր պատուական նամակը, և ցաւօք սրտի ուշի ուշոյ ընթերցանք անոր մէջի պարունակութեանը: Բայց ներքեցեք այս անգամ մեզին, որ ձեր խնդրանացը համեմատ ընդարձակ տեղեկութիւններ չի կարենանք պիտի հաղորդել. ինչու որ ձեր սրտերը հանդարտելու և զձեզ կատարեալ գոհ ընելու համար՝ զրգ. բաղդաբար տարիէ մը ՚ի վեր յառաջ եկած և այժմ խիստ զայրացած մէկ քանի խնդրոց (որ ինչպէս զխաւորագոյնը արդէն ձեր այս նամակին մէջ յիշուած է) սկիզբէն մանրամասն պատմութիւն մը ընել հարկ էր. և այդ և մեր փոքրիկ թերթերուն միջոցաւ կատարելն անկարելի բան մը ըլլալուն, այժմ հոս միայն դարձեալ առնոցմէ պատճառած՝ Լզգին այժմեան գտնուած

յոյժ ցաւալի վիճակին համառօտի նկարագրութիւնը ընելն հարկ սեպելով, քիչ ատենէն զձեզ ամեն կերպիւ գոհ ընելու մտօք՝ յիշեալ խնդրոց սկզբնաբար ինչ բաներէ յառաջ դալուն, և հետեւաբար այսքան չափէ դուրս զայրանալուն բնական պատճառները մասնաւոր տեսրակաւ մը ընդարձակօրէն կը հաղորդեմք . . . : Արդ սիրելի եղբարք ստուգապէս զիտնաք որ յայսմ վայրի Պօլսոյ Հայոց ահմատութեան կոչեցեալ մասին անջրպետը Սթանբուլի, Պատրիարք, Եպիսկոպոս, Սարգապետ, Եփրայ, Իշխան, Լայն նկատելն բնաջինջ եղած, կրօնք, աւանդութիւնք, իրաւունք, պատիւ, արտօնութիւն, իշխանութիւն, օրէնք ժողով, վճիռ, ոչինչ բան մը համարուած, եկեղեցիներն շոգեհաւաններու մէջ փոխադրուած, Լզգային ժողովատեղիներն սրբաւորանները կարգուած, ամեն անհատ իւր ձեռքը մէյմէկ իրաւանց զրօշակ մը բացած, ընդհանուր Լզգին պատիւը քիչ քիչ բերանը մազտաքէզ մը եղած է: Օրօրոցներուն մէջ պատկող մանկիկներն անգամ լեզու ելելով ուղածնին համարձակ խօսելու, դատելու, վճռելու արտօնութիւն մը ստացած. դեռ ևս հազու մօրը գիրկէն ելող աղաքները ձեռու ընկն գրիչ և թուղթ՝ խելքերնին եկածը գրելու ու հրատարակելու ինքնակամ իշխանութիւն մը, և մասնաւոր Լզգային գործոց մէջ ձայն ունենալու,

պառքեմն ինչչափ ստորիւններ յարած կըլլայ դուքսէն տուած լուրերուն վրայօք թէ պաշտպանողական է. թէ ամբաստանողական, պատշաճ է. կրկին պատշաճ, ըսել՝ ազգակործան Միւնստի:

Ըսածներս՝ ապացուցանելու համար՝ մեջ բերեմք նախ՝ ասոր յաւելուածոյն մեջ գրուած Ս. Երուսաղէմայ խնդիրը, որուն ամեն մէկ հատուածները ազգէ անցուցած ժամանակնիս անիրաւ. զրպարտութիւններէ է. բերիմաստ բամբասանքներէ գատ ուրիշ բան մի չեն գտնել, ինչպէս Ս. Երուսաղէմայ արքունոյն փոխանորդ Իսահակ վարդապետին Գեորգ Պատրիարքին ժամանակը ուրօրէից օրը Ս. պատարագ ճատուցանելուն պատմութիւնը դիտելով՝ է. չլռսածնու առեկի Միւնստին նորին անձին հետ ուղղակի խեղ ունենալը ակն յանդիման ճշմարտութիւնով, որ ըսել ուզեր է թէ իբրեւ Իսահակ վարդապետին առանց պատճառի կրից տէր է. բարկասիրտ ըլլալովը անընդունակ է եկեղեցական ինչ է. իցէ պաշտօններու. կը հաբցընեմք Պ. Միւնստին թէ՝ ինչ խղճիւ է. ազգասիրական սկզբունքով նկարագրեր է այս ամբաստանից պատմութիւնը ըսելով թէ՝ «... վէ օրննութիւն իջին ատենան չըզտըղընտա րուհպանճա ուսուլ վէ ատերիքիւնտէն օլմատըղը իջիւն էլինէ գաւազան վերմէգրէր»։ Խեղճ միջնորդ, իմ անոր հաւատացուց ասանկ սովորութիւն ըլլալը մէկ Ս. Երուսաղէմի Արքունոյն փոխանորդի մը Ս. Պատարագ մատուցանելու օրը ձեռքը գաւազան չը տրուիլը, Գեորգ Պատրիարքին անվաւեր վճիռը փաստ բռնելովը այս սարսափելի սուտը բող կուտայ բերնէն, հիշ չէ նէ՝ այս լուրը տալու օրը գոնէ այն օրը եկեղեցին իջներ, հաւանական աղբիւրներէ հաւաստեր է. անանկ գրեր, անամօք գրութիւն...:

Ինչու որ այսչափ տարիներէ ի վեր այս ըսածին հակառակը է. ամենայն կերպիւ հանդիսաւոր ըլլալը տեսնուած, է. մինչեւ անգամ նոյն թաղին տղայոց հարցուի ալ գուցէ անոնք էս անոր այս լանդուզն ստախօսութեանը դէմ գանիար համարանաց արժանի պիտի համարին, ինչ մնաց որ Հայերն ու կղերք... չենք զիտեր կը քնանան արդեօք, բայց այս սուտը դիտմամբ չէ ըսելու մեր կողմէն արժան կը համարինք, ինչու որ Օգոստոսի ամիսներուն մեջ պատահական է՝ այսպիսի գրութիւններ դուքս ցարկել, ուստի աղօթող էմք խելը գլուխը գալուն:

Նաեւ այս պարսաւանքներէն է. զրպարտութիւններէն կը հետեւի ի հարկէ Իսահակ վարդա-

պետին անառատամէտն գտնուիլը առ Միւնստին, որովհետեւ պատմութիւնը ողջմտութեամբ ըրած ժամանակնիս ընթերցողը կրնան մակաբերել որ իրաւցնէ շահասիրութեան համար այս օրուան օրս այս է. ասոր պէտքը զԱզգը տակն ու վրայ ընելու ձեռք գարկած էն:

Ի վաղուց հետէ սովորութիւն է Սուրբ Ծնունդի է. Զատիկի դիմացի շաբթուն Ս. Երուսաղէմայ արքունոյն փոխանորդը Ս. Պատարագ մատուցանել ի դիմաց Սրբազան Պատրիարքի Ս. արքունոյն արարողութիւնը՝ սուրբ Աստուածածնայ Մայր Եկեղեցւոյ մեջ կատարուելով որ այն օրը Կ. Պօլսոյ Պատրիարքը կամ Խումխաբուի դուքսի եկեղեցին է. կամ յիշեալ եկեղեցւոյն մատուռներուն մէկը կը գտնուի, որպէս զի Ս. Երուսաղէմայ արքունոյն փոխանորդին Ս. Պատարագ մատուցանելը հանդիսաւոր կերպիւ ըլլայ, ըստ որում այն օրուան հանդէսը Ս. Երուսաղէմայ Պատրիարքին վերբերական համարուելով՝ բոլոր Ազգիս առաջը նոյն փոխանորդը ներկայացուցիչ մըն է Ս. Արքունոյ Պատրիարքին, որովհետեւ փոխանորդը Եպիսկոպոսական աստիճան չունենալուն համար՝ Պօլսոյ Պատրիարքին ներկայութեանը գաւազան չկրնար կրել, ուստի դիտմամբ պատշաճ որոշուած է բացակայ գլուխի այն օրը որ փոխանորդին ըստ ամենայնի պատուով հանդէսը կատարելը արժանաւոր ըլլայ այսինքն Խաչ է. գաւազան կրելով սկիզբէն մինչեւ վերջը:

Այս հիմանուրց սովորութիւնը Պօլսոյ ամեն Պատրիարքներու ժամանակները անընդհատ է. շարունակ տեսնուելով մինչեւ Գեորգ Պատրիարքի օրը որ փոխանորդը ուրօրէից Ս. Պատարագը մատուցանելու պատրաստուած ըստ սովորութեան հանդէսը Խաչիւ է. Գաւազանաւ կատարելու գրադելու միջոցին, Պատրիարքն ալ անդին Միջագիւղ երթալու պատրաստուած լուսարարապետին անվաւեր հրաման կուտայ որ Իսահակ վարդապետին ձեռքը այն օրը գաւազան չի տրուի. Պ. Միւնստի՝ աղեկ դիտէ՝ այն անցքը, որ փոխանորդը այս հրամանը լսածին պէս ինչչափ սիրտն ու գաղափարը կը շփոթի, չէ մի որ Պատրիարքին առ Իսահակ վարդապետոյն ունեցած անճանկան խելը կը յայտնուի իր տուած անվաւեր հրամանին նայելով, փոխանորդը այս լուզման մեջ ինկած ժամանակը Ս. Պատարագը մատուցանելու էր Միւնստին խելովը. ծածաղիկի լրբութիւն...:

Գիտցած ըլլայ Պ. Միւնստին, որ փոխանորդը

նի, և Ազգային խռովութեան ժամանակ տա-
րածայնութիւնները ուղղելու, բորբոքած երե-
ւակայութիւնները խաղաղեցնելու և 'ի հե-
ռուստ նշմարուած փոթորիկին առջևն առնելու
համար՝ խաղաղութեան և սիրոյ քարոզ ըլլալու
տեղ, երբ ընդհակառակը տարածայնութիւննե-
րը շատցնելու, կիրքերը ևս առաւել գրգռելու,
խաղաղութիւնը վրդովելու, կուսակցութիւննե-
րը բազմապատկելու և ճշմարտութիւնը անխը-
նայ խեղդելու վատ ընթացքը ընտրէ և իր նը-
ւիրական պաշտօնին մէջ անհաւատարմաբար
վարվի նէ, այնպիսի լրագիրը՝ « խռովութեանց
գործիք » ըսուելէ զատ, ուրիշ անուան անար-
ժան է։ Եւս վատ ու վայ բերան լրագիրը Մա-
սիսն է, որ ահագին մեծութեամբ սուտեր կըլ-
լեցնել կուզէ ազգայնոց՝ իր օգուստոս 23 թուով
հրատարակած Ազգային յօդուածին մէջ։ Մենք
ճշմարտութիւնը պարոն Իւթիւճեանին մաշած
ժանեացը կեր ըլլալուն՝ առանց զայրանալու հան-
դիսատես ըլլալ չենք ուզեր, և իր թերթը՝ թուք
ու մուրով հանդերձ իր սև երեսին զարնելէ
ետքը՝ մենք ասդին իր սուտերն մի առ մի նշա-
նակելու կը զբաղենք։ Ե. Մասիսը կրտէ թէ՝
« Մեծապատիւ Ազգասէր Միրիճան Ամիրային
գրասենեակը՝ միաբան հաւանութեամբ որոշում
ներ ըրին 'ի խաղաղութիւն Ազգին »։ Մասիսը
այն խաղաղասիրական սկզբանց պատմութիւնը
իր ուզածին պէս շարագրելով, սուտը ճշմարտի
տեղ կլլեցնելու կելլէ։

Խաղաղասիրական ժողովին առաջին պայմա-
նը այս էր որ, « Խնամքներուն մէջէն խել մը
պատուաւոր անձինք, ամեն ընդհանուր ժողով-
ներու մէջ գտնովին »։ Մասիսը այս որոշումը
սուտերով կը պատմէ ըսելով թէ, վերոյիշեալ
պատուաւոր անձանց ընդհանուր ժողովներու
անդամակցութիւնը առանձնաշնորհութիւն մը
լէ, այլ Ազգային խորհրդոց մէջէն որ և իցէ
պատճառաւ պակասողներուն պակասը լեցնելու
համար է։ Երկրորդ պայմանը այն էր որ՝ « Ս. Ե-
րուսաղէմի Միաբանութեան կանոնադրութեան
42^{րդ} յօդուածը բոլորովին վերնայ, և 41^{րդ} յօդ-
ուածն ալ փոփոխութեան տակ ըլլայ »։ Մա-
սիսը այս որոշումը սուտերով կը պատմէ թէ՝ Ս.
Երուսաղէմի Միաբանութեան համար Ազգա-
յին ընդհանուր ժողովով սահմանված կանո-
նադրութիւնը՝ Միաբանութեան կողմէն անփո-
փոխ պիտի ընդունվի։ Երրորդ պայմանն ալ այն
էր որ՝ « Ս. Երուսաղէմ այցելու խրկել հարկ

ըլլալը՝ Ընդհանուր ժողովով որոշվի, և Արծնա-
կան ժողովին յանձնովի, որ իբր այցելու՝ Ակե-
ղեցական մը խրկուի սահմանափակ հրահանգ-
ներով։ Մասիսը՝ այս որոշումը ամենևին չի լը-
սելու զարներով ասոր վրայ խօսելու համար կը
պապանձի։ « Ստախօս դու, փոխանակ եղած
ներն այսպէս ծուռ ու սուտ հրատարակելու,
որոնց ճշմարտութիւնը՝ Ամիրային սենեակը գրա-
նուորներուն ամենն ալ կը վկայեն, աւելի աղէկ
կ'ընէիր որ լուծութիւնն ընտրէիր և ասանկ յայտ-
նի սուտերով չանպատուէիր այն ժողովը, և
գոնէ ահնաճէիր նոյն ժողովին՝ Ախադահ խա-
ղաղասէր Ամիրայէն և Յարգի Ժողովականնե-
րէն։

Բ. Մասիսը (օգոստոս 21) Երկուշաբթի
օրուան Ընդհանուր ժողովին նկարագրութեա-
նը ձեռք կը զարնէ, նոյն օրվան տեղի ունեցած
յանդգնութեանց կողմը բռնելով։ Ողորմած հո-
գի Մեղուն՝ ըսած էր թէ « դռներուն մէկուն
երկու փեղկերը կռնակնուն վրայ բացուեցան ի-
րենց օրինաւոր պահանջմանց առջև »։ Մասի-
սը այսչափ մը ալ չի խօսելով կամաւ կը մոռնայ
պատմել դռներուն աքացվիլը, և Ամենապատիւ
Սրբազան Պատրիարքին՝ պատկառելի Յակոբ
Սրբազանին՝ և Ակեղեցականաց դէմ եղած կը-
ծու և նախատալից խօսքերը, Յակոբ Սրբա-
զանին վտանգաւոր կերպով մարկիլ, Ուսումնա-
րանի ապակիներուն և աթոռներուն և ուրիշ
կարասեաց կրած մնասը, և Սրբազան Պատրի-
արքէն բռնի ստորագրութիւն առնելու համար՝
դիտմամբ եղած սոսկալի՝ նախատալից և բերան
չառնուելու զարհուրելի խօսքերը, ասոնց և ոչ
խիկ մէկը կը յիշէ, և ասոնց տեղը հետեւեալը
կը պատմէ։ Ար պատմէ թէ՝ « քանի մը անձինք՝
Տեսչութեան դուռը վազելով, և ո՞վ գիտէ ինչ
պէս լուր տալով՝ Մէլիմ փաշան Պատրիարքա-
րան հասաւ և խորհրդարանը երթալով՝ տեսաւ
որ՝ ո՞չ կռիւ կար և ո՞չ մէկուն քիթն ալ արոււնած
էր »։ Հոս տեղ չի յիշեր՝ Մէլիմ փաշային՝ կի-
սամեռ Յակոբ Սրբազանի քովն երթալը, և
« վահ վահ, զավալը էհ թիպար նէ հալէ տիւ-
չար օլմուշտուն, վէ էյիճէ պագընրդ » ըսելը, և
անկեց ուսումնարանը ելլալով և հոն խռնրված
ամբոխին նոյն իսկ Սրբազան Պատրիարքին չորս
բոլորը առած ու հագար ու մէկ նախատանօք
բռնի ստորագրութիւն ուզելնին տեսնալով և
ամբոխը խաղաղեցնելու հասար աշխատած ա-
տենը, « խնդիրը կրօնական է դուն չես կրնար

առնելու աշխատութիւնը կրելու՝ բայց գիտես արդեօք մեր երթալու համար։ — Հոն՝ ուր Մեղուն և Միւնատին դադարեալ կը մտածեն ձեռնարտաւէր Հայեր։

ՆՐՐՈՐԻ ՅԵՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ*

Սուրբ Երուսաղէմի խնդրոյն պատճառաւ Եզգին մէջ ծագած ցաւայի երկպառակութիւնը ինչպէս ամեն տեղ անանկ ալ Պէկոզլույիս մէջ բաւական ազդեցութիւն ունեցաւ. բայց տեղական խաղաղութիւնը անվրդով պահելու համար ոչ որ կամեցաւ իր կողմը զօրացընելու մտօք մահելի և ստորագրութեան դիմել։ Թաղական խորհուրդին անգամ որ բոլորովին լուսաւորեալ ենք ըսողներուն կողմը յարած էր, չէր ուզած ասանկ միջոց մը բռնել և քանի անգամ Ետեմապետ Յարգամեծար Յօհաննէս Եղայն, Ա. Տալուտեանց զուրցեր էր որ մեր կողմէն բնաւ ստորագրութիւն դուրս հանելու չեմք։

Բայց օգոստոս 21, երկուշաբթի աւուր յարձակմունքը որ Պուլմաբու Մայր դպրոցին մէջ պատահեցաւ՝ անկէ, չորս օր ետքը օգոստոս 25, ուրբաթ առտու յանկարծ Լմենասուրբ Նրորդուլթեան Եկեղեցւոյս բանկալը Թաղական խորհուրդէն քանի մը հոգի քանի մը համախոհներով մահելի մը երեւան հանեցին, իրենք ամեն Եկեղեցի մանողը ստորագրել հրաւիրելէն ետքը, մեզոյ, ժամկոչ, զրազիր և դպրոցի չափահաս տղայք փողոցները ցրուելով խանութները մարդ չի թողելով Եկեղեցի կանչեցին ստորագրել. և մահելին պարունակութիւնն ալ Սահմանադրութիւնը ուզել, Ս. Պատրիարքը չուզել և երկուշաբթի աւուր եղածին համար սրիկայ ըսողներուն հետ դատ պահանջել է եղեր։

Տեղացիք՝ երբ Թաղական խորհրդոյ վսեմապանծ ատենապետին խոստմանը հակառակ մահելի դիմելին տեսան, որն որ Եզգին ողջախոհ մասին անհաճոյ և Սրբազան Պատրիարք Հօր անպատուութիւն կը բերէր, պարտաւորեցան իրեք ալ մահելի մը շինել և որուն միջոցաւ ծանուցանել Եզգին լուծեանը թէ Պէկոզլույիս մէջն ալ կայ փոքրիկ մասն մի Եզգին ողջախոհ մասին համախոհ և առոնց ալ մահելին պարունակութիւնն էր, Սահմանադրութիւնը Տեղութեան Բարձր հրամանաւր ընդունիլ և Սրբազան Պատրիարք Հօր կառավարութենէն դոհ և շնորհակալ ըլլալ։ Բարեբաղդաբար կարծուածէն աւելի ստորագրութիւն ալ ունեցաւ։

Եսոր դէմ կարծեաց ազատութեան պաշտ

պան եղողները զայրանալով, ասոր անոր խորհուրդ կուտան որ վարպետութեամբ գան մահելը պատուեն, որուն մէկը կու գայ կ'իմացընէ, որ «Օխ պատուելու խաւրեցին, բայց ես ատանկ բան չեմ կրնար ընել»։

Ես ալ հերիք չը սեպելով կիրակի առտու ժամերգութեան ժամանակ, կարծեցեալ լուսաւորեալներուն կողմը բռնող պատկառելի ծերունի մը Եզգին ողջախոհ մասին հետեւող պատուարժան քահանայներէն Տէր Միքայէլը տեսնալով շատ մը յանդիմանութիւններ ընելէն ետքը կ'ըսէ ալ որ «Եսուհետեւ ինչ խղճմտանքով Սուրբ Սեղանոյն վրայ սպասաւորութեան պիտի ելլաս. չէն կարդար կոր Սաղմոսը որ կ'ըսէ, — Տէր ով կացցէ 'ի խորանի քում. կամ ով բնակեցցի 'ի լեւան սուրբ քո. Որ գնայամբի՞ժ, գործէ զարդարութիւն, խօսի զձեռնարտութիւն 'ի սրտի իւրում»։ Բսել է որ Տեղութեան հընազանդ և Սրբազան Պատրիարք Հօր հետեւողը, Սաղմոսին վերոյիշեալ խօսքերուն դէմ դործած կ'ըլլայ կոր. զարմանք, զարմանք և դարձեալ զարմանք. լուսաւորեալներուն խոհակալութիւնն ու բարեպաշտութիւնը գուցէ այս եղած ըլլայ։

Նոյն կիրակի առտուն, աւարտման Սուրբ Եկեղեցւոյն, ժողովուրդը խորհրդարանը հրաւիրելով վերոյիշեալ ծերունիին մեծ եղբայրը ատենախօսութիւն մը կ'ընէ, որուն մէջ կը յայտնէ որ իրենց միտքը Սուրբ Երուսաղէմի գանձը հոս բերել և Եզգին օգտին ու պիտոյիցը ծառայեցընել է եղեր, և որուն դէմ կեցողները կը քամահոյն ու կը մեղադրէ. և նաև հոն ժողովոյն մէջ ալ վերստին կը նախատուի տէր Միքայէլ քահանայն իրենց հակառակ մահելին կողմը բռնելուն համար։

Ա երջ կուտանք խօսքերնու ծանուցանելով որ, Եզգային Սահմանադրութիւնը կ'ընդունիմք Ա. եհափառ Տեղութեան Բարձր հրամանին մնալով, և Ս. Պատրիարք Հօրը կառավարութենէն բնաւ տրտունջ մը չունենալով դոհ եմք և շնորհակալ. և նաև Եզգին ողջախոհ մասն երբեք զատուելիք չունիմք, միանգամայն Եզգին խաղաղութեանը փափագող ըլլալով մահելի և յայտարարութեան դիմել չեմք ուզեր, թէ որ ուրիշ կողմէն մահելի և յայտարարութիւն չը տեսնեմք։

29 Օգոստոս 1864

Ազգին ողջախոհ մասին հետեւող Պէկոզլուցի Հայեր։

Խմբագիր—Տնօրէն

Մ. Գ. ՏԵՅԻՐՄԷՆՃԵԱՆ

ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐԲՃԵԱՆ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ ՖԵՆՃԱՆՃԵԼԻՐ

*Այս Յայտարարութիւնը արդէն առանձին 'ի լոյս ելած է, բայց մէջը դիտողութեան արժանի կէտեր ըլլալուն Օրագրոյս մէջ ալ կը հրատարակեմք։